ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Աննա Ավալյանը, Արմինե Պապյանը, Վահրամ Սուքիասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Միեր Պապյան, Մարտին Ապրեսյան, Արմեն Փոլադյան, Լևոն Մադյան, Աննա Նավասարդյան, Վաղարշակ Գրիգորյան, Արթուր Թումանյան, Աստղիկ Մելքումյան, Մելինե Պապյան, Ալինա Ալավերդյան, Քրիստինե Միրզոյան

Նիստը վարում էր Բերդ համայնքի ղեկավար՝ Աստղիկ Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Մարտին Ապրեսյանը

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

*1.Հաստատել Բերդ համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը.*

**1)** ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Ա.Թումանյան/*

2) ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի <<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 221-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Ա.Թումանյան/*

3)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Ա.Թումանյան/*

4)ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Ա.Թումանյան/*

5)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ, ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Ա.Թումանյան/*

6)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 0.20000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ. Գրիգորյան/*

7)ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.11619 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 11-054-0084-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ. Գրիգորյան/*

8)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-014-0436-0044 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,24818 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ. Գրիգորյան/*

9)ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.14693 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 11-051-0011-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ. Գրիգորյան/*

10)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 0.051327 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. Վ. Գրիգորյան/*

11)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

=14 Դեմ-0 Ձեռնպահ-0

րոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 404-Ա/

Լսեցին
*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 92-րդ հոդվածի 1-ին կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի բյուջեի 2024 թվականի երրորդ եռանսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդումը՝ համաձայն հ ավելվածների (3-4):

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 405-Ա/

Լսեցին
*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի <<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 221-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով,

Բերդ համայնքիավագանին որոշում է՝

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28 - ի <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2024 թվականի տեղական հաստատելու մասին>> N 221-Ա որոշման մեջ և հավելվածներում 1 – ում և 6 – ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Համաձայն 13 սեպտեմբերի 2024 թվականի <<Բերդի մշակույթի տուն>> Հիմնարկի տնօրեն Մարիետա Մանուչարյանի և <<Ծիլի Ծով>> ՏՄԽ ՀԿ – ի տնօրեն Անահիտ Բադալյանի միջև կնքված թիվ N02/09/24 պայմանագրի՝ հիմք ընդունելով ԵՄ

ղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում>>
ագրի շրջանակներում <<Ծիլի Ծով>> ՏԱԽ-ի համաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 11-
րստի N02/24 արձանագրությունը՝ <<Ծիլի Ծով>> ՏԱԽ ՀԿ –
Դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով <<Բերդի մշակույթի տուն>>
Հիմնարկին դրամաշնորհի տեսքով 600.0 հազար(վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ֆինանսական միջոց
է տրամադրում՝ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքներ,
աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով: Հետևաբար, վերոհիշյալ գումարը
ավելացնել բյուջեի եկամտային մասի /հատված 1/ Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝
համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ հոդվածում (տող 1393), իսկ ծախսային
մասում/հատված 6/՝ Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ/տող2823/, 4269 հոդվածում :

Համաձայն Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարության՝ ի դեմս գլխավոր քարտուղար Հ.
Նասիբյանի և ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ղեկավար Ա. Հակոբյանի (հիմք ընդունելով
2024 թվականի հուլիսի 22-ի N267-24 պայմանագիրը) միջև կնքված համաձայնագրի,
Բերդ համայնքի գարնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանք իրականացրած
շահառուներին տրամադրված
1553.55հազար(մեկ միլիոն հինգ հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր հիսուն)
ՀՀ դրամը ավելացնել բյուջեի եկամտային մասի /հատված 1/ Այլ եկամուտներ հոդվածում (տող 1393),
նույն ծրագրի շրջանակներում ծրագրի մոնիթորինգի իրականացման համար տրամադրված 46.606
հազար(քառասունվեց հազար վեց հարյուր վեց) ՀՀ դրամը ավելացնել բյուջեի եկամտային մասի
/հատված 1/ Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ
հոդվածում/տող 1256/, իսկ ծախսային մասում/հատված 6/՝ Գյուղատնտեսություն/տող 2421/, 4729
հոդվածում:

Համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը ավելացնել՝ 2200.2 հազար դրամով և
հաստատել.

ա) եկամուտների մասով՝ 1690434.7 հազար դրամ,

բ) ծախսերի մասով՝ 1872335,4 հազար դրամ,

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 406-Ա/

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՅԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 42-րդ կետերով,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

ամածայնություն Բերդ համայնքիԱյգեպար բնակավայրի առաջին և երկրորդ փողոցներում վող վթարային կամրջակների ապամոնտաժման արդյունքում եղած երկաթե հեծանները և կյունակները,այն է՝

1. Մետաղական հեծաններ – վեց հատ – 11 մետրանոց

2. Մետաղական հեծաններ – չորս հատ – 10 մետրանոց

3. Մետաղական հեծաններ – երեք հատ – վեց մետրանոց

4. Մետաղական հեծաններ – վեց հատ – չորս մետրանոց

5. Երկաթե խողովակներ – մեկ հատ – 100 սմ տրամագծով - հինգ մետր

6. Անկյունակներ տարբեր հաստությունների՝ շուրջ 130 մետր

ընդգրկել Բերդ համայնքի գույքացուցակում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 407-Ա/

Լսեցին
*ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածով և 18.53 հավելվածով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն նախկին Նորաշենի գյուղապետարանի անվամբ գրանցված UAZ 31512 մակնիշի, 088LL70պետհամարանիշով, 0022221 հենասարքի համարով, SM732401 հաշվառման վկայագրով տրանսպորտային միջոցը անվանափոխել Բերդ համայնքի անվամբ, գույքային արժեքը թողնել անփոփոխ:

2.Տասնօրյա ժամկետում կատարել տրանսպորտային միջոցի հաշվառում ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստկանության» բաժանմունքում:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 408-Ա/

ին

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ, ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ)*

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի, հողի և գույքի վարձավճարների հարկերի գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը:

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, 8-րդ մասերի պահանջներով և <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>> 28.04.2012թ. ՀՀ օրենքով,

*Բերդ համայնքի ավագանին որոշում է՝*

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան դիմած բնակիչների անվամբ գրանցված շարժական և անշարժ գույքերի, հողի և գույքի վարձավճարների հարկերի գծով տրամադրել արտոնություններ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 409-Ա/

Լսեցին

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 0.20000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Համայնքի ավագանին որոշում է՝

...լ համածայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Արծվաբերդ, 1 փողոց, 6/1 ...ամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ...դերբօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային, գյուղատնտեսական ...րտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.20000 հա մակերեսով հողամասն ...աճուրդով օտարելու համար:

2.Մեկնարկային գինը սահմանել՝480 000 /չորս հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 410-Ա/

Լսեցին
*ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.11619 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 11-054-0084-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Պառավաքար, 2-րդ փողոց, 1-ին նրբանցքի 1-ին փակուղի 4 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.11619 հա մակերեսով, 11-054-0084-0012 ծածկագրով հողամասն աճուրդով օտարելու համար:

2.Մեկնարկային գինը սահմանել՝220000 /երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 411-Ա/

Լսեցին
*ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-014-0436-0044 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,24818 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

ավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 001թ. ապրիլի 12-ի Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով,վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Արծվաբերդ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 11-014-0436-0044 ծածկագրով, 0,24818 հա մակերեսով արոտավայրը:

2. Սահմանել 0,24818 հա մակերեսով արոտավայրի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 5 000 /հինգ հազար/ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 412-Ա/

Լսեցին
*ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.14693 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 11-051-0011-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Չինարի, 9-րդ փողոց, 20 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.14693 հա մակերեսով, 11-051-0011-0001 ծածկագրով հողամասն աճուրդով օտարելու համար:

2.Մեկնարկային գինը սահմանել՝220000 /երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

շումն ընդունված է. /կցվում է որոշում N 413-Ա/

սեցին

*ՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 0.051327 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Արծվաբերդ, 1 փողոց, 40 փակուղի, 74/3 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.051327 հա մակերեսով հողամասն աճուրդով օտարելու համար:

2.Մեկնարկային գինը սահմանել՝140 000 /հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 414-Ա/

Լսեցին

*ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով,

**Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 25-ին՝ ժամը 16:00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 415-Ա/

Ավագանու անդամներ

ՀԱՄԱՅԱԿ ԱԴԱՄՅԱՆ

ՆԵԼԼԻ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ԳԱԳԻԿ ԱՍՐՅԱՆ

ՍԵՎԱԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ՁՎԱՐԴ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԺԻՐԱՅՐ ՄԻՐԶՈՅԱՆ

ԱՐԱՄ ՆԻԳՈՅԱՆ

ԷՄԱՆՈՒՅԵԼ ՈՒԶՈՒՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

*Բերդ համայնքի ղեկավար*

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Մարտին Ապրեսյանը